ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

Ս. ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈԴՎԱԾԸ

Սուրեն Սպանդարյանի գրական ժառանգության հավաքման ու հրատարակման ուղղությամբ մինչև այժմ մեծ աշխատանք է կատարվել։ Այդ գործում խոշոր ավանդ ունի հատկապես պրոֆեսոր Վ. Ա. Ավետիսյանը, որը ժամանակին կազմել ու խմբագրել է ականավոր լենինյանի երկերի ժողովածուները։ Այդուհանդերձ, Ս. Սպանդարյանի բոլոր երկերը չէ, որ հայտնաբերված են և կասկած չկա, որ հետագա պրպտումներն ու հետազոտությունը կտան նոր արդյունքներ։

Այժմ հրատարակում ենք Սուրեն Սպանդարյանի հոդվածներից մեկը, որը տպագրվել է «Նոր դար» թերթի 1911 թ. հոկտեմբերի 24-ի համարում։ Այն նվիրված է նրա հոր՝ Սպանդար Սպանդարյանի դեմ դաշնակցականների հարուցած չարամիտ մեղադրանքի և զրպարտության մերկացմանը։

1910 թ. օգոստոսին դաշնակցության կենտրոնական օրգան «Դրոշակում» տպագրվել էր մի կեղծագիր, որի մեջ ապդարարվում էր, թե իբր «Նոր դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանը 1904 թ. հունվար ամսից ցարական լրտես է, պաշտոնագրված ու վարձակալված ոստիկանության կողմից[1]*։*

Դաշնակների նպատակն էր վարկաբեկել թե՛ իրենց հակառակորդ պահպանողական Սպանդար Սպանդարյանին և թե՛ նրա որդի բոլշևիկ Սուրեն Սպանդարյանին, որն իրենց երդվյալ թշնամին էր։ Դաշնակների նյութած ամբաստանագիրը տպագրվեց մի շարք թերթերում (հայերեն ու ռուսերեն) և ստեղծվեց «աղմկալից գործ»։

Ովքեր մոտիկից գիտեին Սպանդար Սպանդարյանին, չէին կարող հավատալ դաշնակցական հերյուրանքին։ Բայց հարկավոր էր լայն հասարակությանը համոզել, որ զրպարտվում է ազնիվ մարդը։ Ինքը՝ Սպանդար Սպանդարյանն անմիջապես հանդես եկավ դաշնակցության ամբաստանագրի վճռական հերքումով և հայերեն ու ռուսերեն մի շարք թերթերում տպագրվեցին նրա նամակները։ Նա գրում էր. «Դաշնակցության կուսակցության ամբողջ այդ ծանուցումը, որով ինձ մեղադրում է դավաճանության, պրովոկատորության մեջ, քստմնելի և նենգավոր զրպարտություն է և սուտ՝ բխած կուսակցական բշնամիությունից և կույր ատելությունից «դաշնակցական» շենքերի կողմից դեպի իմ երկարամյա ամբողջ գործունեությունը»: *Նա պահանջում է կազմակերպել «հրապարակային դատ, որի առաջ հանդես գան ինձ ամբաստանողներն իրենց «գրավոր անհերքելի փաստերով» և որտեղ կմերկացվի նրանց ամբողջ բարոյական դեմքը և նրանց «փաստերի» ամբողջ ստությունը»*[2]*։*

Չնայած Սպանդար Սպանդարյանն արդեն ծեր էր և գտնվում էր նյութական ծանր վիճակում, լայն կամպանիա սկսեց, ունեցավ բազմաթիվ բանավոր ու գրավոր ելույթներ և ապա 1910 թ. նոյեմբերին մեկնեց Փարիզ, որպեսզի կազմակերպի միջկուսակցական դատ և փաստերով ապացուցի իր անմեղությունը, հրապարակայնորեն մերկացնի զրպարտիչներին։

Կոմունիստ Սուրեն Սպանդարյանը, իր հոր՝ ազգային-պահպանողական հոսանքի պարագլխի գաղափարական հակառակորդը լինելով հանդերձ, լիովին համոզված էր, որ նրա դեմ հարուցված մեղադրանքը շինծու է։ Պարզապես անբնական էր նրան անվանել ցարական լրտես, որովհետև նա, թեկուզ իր (հայկական պահպանողության) դիրքերից, ցարիզմի հակառակորդն էր և միշտ էլ պայքարել էր նրա բռնի ռուսացման ու հայահալած քաղաքականության դեմ, իսկ 1904 թ.՝ հակացարական ելույթների համար ձերբակալվել էր։ Մյուս կողմից, քանի որ հոր դեմ հարուցված այդ «գործը» ստանում էր հասարակական կարևոր նշանակություն, Սուրեն Սպանդարյանը, ինչպես նաև բոլշևիկ այլ գործիչներ, ակտիվորեն միջամտեցին զրպարտության մերկացմանը։ Նրանք բանավոր և գրավոր կերպով հայ հասա-

---

1 «Դրոշակ». 1910, № 5։

2 «Նոր դար». 1883—1910, № 1։

բակությանը կոչ արին պարզել ողջ ճշմարտությունը և պատժել հանցավորին։ Ահա, օրինակ, ինչ էին գրում Ս. Կասյանն ու Ռ. Քաթանյանը իրենց նամակ-հոդվածում («Պետք է աջակցել» խորագրով), որը տպագրվեց «Սուրհանդակ» թերթում։ Այնտեղ շեշտվում էր, որ հասարակությունը չի կարող անտարբեր մնալ մի այդպիսի հարցում. «Երկուսից մեկը. կամ «Դրոշակի» հայտարարությունը ճշմարտություն է, հետևապես, պ. Սպանդար Սպանդարյանը գաղտնի ոստիկանության ագենտ է, կամ պ. Սպանդարյանը անմեղ է, հետևապես դաշնակցության կենտրոնական օրգանը՝ մի անգլուխ լրպարտիչների բանդա»։ Շարունակելով նրանք նշում են. «Մենք, որպես նոր սերնդի ներկայացուցիչներ, լինելով ամբողջ «հոգով և մարմնով» հակառակ պ. Սպանդար Սպանդարյանի, նրա դինակիցների և հետևողների աշխարհայեցողությանը և ուղղությանը, կոչ ենք անում ամբողջ հասարակությանը՝ աջակցել և հնարավորություն տալ պ. Սպանդարյանին պատասխան տալու իր վրա բարդած սպանիչ մեղադրանքին»[3]։

Բնորոշ է, որ բոլշևիկների այդ դիմումը չուզեցին տպագրել ո՛չ լիբերալ-կադետական «Նշակը» և ո՛չ էլ դաշնակցական «Հորիզոնը», բայց այն արձագանք ունեցավ դեմոկրատական շրջաններում, մանավանդ երբ այդ առթիվ Ս. Կասյանն ու Ռ. Քաթանյանը հանդես եկան նոր հոդվածով («Բաց նամակ հասարակության»)[4]։

Ս. Սպանդարյանը, անձամբ զբաղվելով հոր գործերով, նույնիսկ նամակ պատրաստեց՝ ուղղված ռուս հրապարակախոս Վ. Լ. Բուրցևին, որը, 1907 թ. մեկնելով արտասահման, հայտնի դարձավ որպես ցարական պրովոկատորների մերկացնող։ Ականավոր բոլշևիկի արխիվում պահվում է այդ նամակը, որը պատկերացում է տալիս, թե ինչպիսի հիմնավոր փաստարկումով էր հանդես գալիս նա. «Ես խորապես ափսոսում եմ, որ հնարավորություն չունեմ մասնակցելու այդ դատավարությանը, որպեսզի փաստերով ապացուցեմ այն ամբողջ կոպիտ միստիֆիկացիան, որի մեջ մտցրել են պարոն մեղադրողները ամբողջ դատարանին։ Սպանդարյանը մեղադրում է նաև Բուրցևին, որի անունն օգտագործում են դաշնակները, իսկ ինքը չի հերքում դա։ Անցնելով բուն նյութին, նա ուղղակի գրում է. «Ո՛չ իմ հայրը, ո՛չ նրա ուղղությունը հասարակական-քաղաքական տեսակետից ոչ միայն կառավարության կողմից աջակցության չէր հանդիպում, այլև միշտ հալածվում էր ամենադաժան կերպով... Արժե միայն վերընթերցել իմ հոր թերթի դեմ «Новое время»-ի հարձակումները, արժե միայն բրբրել ցենզուրային կոմիտեի արխիվները, արժե միայն վերհիշել, որ իմ հոր կողմից առաջադրված կաթողիկոսական ոչ մի թեկնածուի երբեք չի հաստատել կառավարությունը, որ հայկական եկեղեցիների ունեցվածքի գրավման ժամանակ դրա դեմ ակտիվ պայքար տարավ իմ հայրը՝ իր թերթով, իսկ լիբերալները իրենց թերթում համակրանքով արտատպում էին «Кавказ»-ի պաշտոնական հոդվածը և այլն, և այլն, որպեսզի իսկույն հասկանալի լինի հակառակ պրոդումների ամբողջ կեղծությունը»[5]։

1911 թ. հունվարից Փարիզում սկսվեց Սպանդարյանի դործի նախաքննությունը և առաջին իսկ զրույցները պարզեցին, որ նա մեղավոր չէ։ Այդ մասին լուրեր տպագրվեցին մամուլում։ Թավրիզում հրատարակվող «Զանգ» շաբաթաթերթի 1911 թ. փետրվարի 16-ի առաջնորդողում («Հ. Հ. Դաշնակցությունը և Սպանդարյանը» վերնագրով) ասված է. «Մենք ուրախ ենք հայ խմբագիր Սպանդարյանի հաղթությամբ և կրկնակի ուրախ ենք պարտությամբը «Դրոշակի» կամ դաշնակցականների, որոնք մտրակը, սարսափն ու «տեռորը» մոնոպոլ արած, աջ ու ձախ չնչին պատրվակներով մատաղ ու անփոխարինելի կյանքեր են զոհաբերում կրքերին... Մենք վստահ ենք, որ հայ հասարակությունը և ամբողջ մամլո աշխարհը ևս ուրախ կլինեն հանիրավի և չարամտարար արտավորված հաղթությամբ և կեղծողների, ահաբեկիչների կոր ի գլուխ մնալով ու վարագուրված ճշմարտության երևան գալով... Ամոթ և անվերջ նախատինք գաղափարական հակառակորդների դեմ անազնվությամբ կեղծիքներ դարբնողներին և ճշմարտությունը խեղաթյուրողներին»։

Պատին սեղմված դաշնակցությունը խորամանկում է և ձգձգում դատական գործը, բայց վերջիվերջո հաջողվում է Փարիզում կազմակերպել միջկուսակցական դատարան (սոցիալ-դեմոկրատների ու էսէռների ներկայացուցիչներից), որը հանգամանորեն քննում է «հարուցված մեղադրանքը» և 1911 թ. հուլիսի 20-ին լիովին անմեղ ճանաչում Սպանդար Սպանդարյանին։ Էստ էության դաշնակցությունը մեղադրվում է զրպարտության մեջ, բայց պատիժ չի ստանում

---

3 «Սուրհանդակ». 1910, № 151։

4 Նույն տեղում, № 154։

5 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4006, ց. 1, գ. 272, թ. 4—5։

է. Նույնիսկ չի հոդում կատարված նյութական ծախսերը։ Այնուամենայնիվ, ապահովված էր Սպանդար Սպանդարյանի բարոյական-քաղաքական հաղթանակը։

Սուրեն Սպանդարյանը, իհարկե, ընդհանուր առմամբ գոհ էր այդպիսի արդյունքից, բայց նա գտնում էր, որ դա քիչ է և պետք է շարունակել դատական պայքարը դաշնակցության դեմ։ Այդ մասին է վկայում հրապարակվող «Ում որ Ձևը ուզում է պատժել՝ նախ խելքն է առնում» հոդվածը, որի տակ ստորագրված է «Տ.»։ Ինչ խոսք, որ դա պատկանում է Սուրեն Սպանդարյանի գրչին։ Քանի որ նախ՝ «Տ.»-ն նրա ծածկանուններից մեկն էր (այդպես ստորագրվել են նրա մի շարք հոդվածները, որոնք լույս տեսան «Կուրյեր-կոպեյկա» թերթում) և երկրորդ՝ ինչպես վերնագրի դիպուկությունն ու սրությունը, այնպես էլ ողջ հոդվածի էությունը, լեզուն ու ոճն անվերապահորեն սպանդարյանական են։

Այդ հոդվածում շեշտվում է, որ միջկուսակցական դատարանը միաձայն հաստատեց Սպանդար Սպանդարյանի անմեղությունը և դրանում զարմանալի ոչինչ չկա, քանի որ իրականությունն այդպիսին է. «Որ դատարանը այդպիսի վճիռ պիտի տար, դրա մասին ոչ ոք էլ չէր կասկածում, որովհետև ամեն մի ոչ կույր մարդու համար էլ պարզ էր և ակներև այս ծանր մեղադրանքի անհեթեթությունը, որ բարդում էին Սպ. Սպանդարյանի վրա։ Ով ծանոթ է «Նոր դարի» խմբագրի թե՛ հասարակական-քաղաքական ֆիզիոնոմիային և թե՛ իրրև մարդու, այդ գարշելի անհեթեթության հենց առաջին երևան գալու րոպեին հասկացավ, որ այդ մեղադրությունը կա՛մ մի սարսափելի սխալ է, կա՛մ թե նախամտածված հրեշային սուտ է՝ թելադրված կուսակցական գծուծ շահերից»։

Սպանդարյանը շատ ավելի կարևոր է համարում մեղադրող կողմի՝ դաշնակցության, նրա պարագլուխների «այլանդակ պատկերի» մերկացումը։ «Ամեն մի քաղաքակիրթ հասարակություն,— եզրափակում է Սուրեն Սպանդարյանը,— պետք է յուր անողոք դատավճիռը տա մի այդպիսի կուսակցության վերաբերությամբ, որը իդեալականության դիմակի տակ իսկապես բարբարոսաբար ցեխոտում և անմաքուր միջոցներով ոտնատակ է տալիս մարդու և քաղաքացու անրոնաբարելի իրավունքը, որն ամենացայտուն կերպով՝ նեղ, կատարյալ գաղանային ընդդիմներին բավականություն տալու համար, ծաղրում է ճշմարտությունն ու արդարությունը»։

Հավանաբար, այս հոդվածը Սուրեն Սպանդարյանի միակ ելույթն էր հոր հիմնադրած թերթում։ Նա այդ ժամանակ այլ հնարավորություն չուներ։ Ի դեպ, հոդվածը թեև քաղաքականապես հատու էր, խիստ հակադաշնակցական, բայց միաժամանակ զուսպ Սպանդար Սպանդարյանի ծառայությունների արձանագրման մեջ, որը բացատրվում է Սուրեն Սպանդարյանի աշխարհայացքով, ինչպես նաև նրա ընդհանուր ներքին կուլտուրայով (որդին չպետք է ավելորդ զեղումներ կատարի հոր նկատմամբ)։

1912 թ. հունվարի սկզբին լինելով Փարիզում, Սուրեն Սպանդարյանը մանրամասնություններ է իմանում տեղի ունեցած դատական պրոցեսի մասին, հուսադրում հորը և քաջալերում նրա հակադաշնակցական գործունեությունը։ Պրագայի կոնֆերանսից հետո Ս. Սպանդարյանը, Վ. Ի. Լենինի հետ միասին 1912 թ. փետրվարի սկզբին նորից է ժամանում Փարիզ, ուր մնում է 3—4 օր։ Հնարավոր է, որ այստեղ էլ նա հորը ծանոթացրած լինի Վ. Ի. Լենինի հետ։ Կարծում ենք, այդպիսի տպավորություն կարելի է ստանալ թե՛ Վ. Ի. Լենինի 1912 թ. մայիսի 5-ի նամակից (Ոսկի Տեր-Հովհաննիսյանին) և թե՛ Սպանդարյանի մասին Կ. Կրուպսկայայի հիշողություններից։

1912 թ. մարտին Սուրեն Սպանդարյանը ձերբակալվում է Բաքվում։ Այդ լուրը հասավ Փարիզ՝ Վ. Ի. Լենինին։ Նա վշտացավ և մտահոգվեց իր զինակցի ու կուսակցության խոշոր գործչի բանտարկության առթիվ, ուզում էր իմանալ բոլոր մանրամասնությունները և կազմակերպել հնարավոր օգնություն։ Այդ նպատակով ապրիլի 22-ին Վլադիմիր Իլյիչը՝ Ն. Կ. Կրուպսկայայի ուղեկցությամբ այցելեց Սպանդարյանի հորը, որը գտնվում էր ծանր վիճակում։ «Սուրենի հայրը,— գրել է Ն. Կրուպսկայան,— հիվանդ ծերունի էր, ապրում էր միայնակ և անինամ, նա փող չուներ, նույնիսկ ոչինչ չուներ բնակարանի վարձը վճարելու համար, հիշողություններ նրան դավաճանել էր. նամակ էր գրում, բայց հասցեն մոռանում էր գրել։ Իլյիչը շատ խղճաց ծերունուն։ Եվ Բաքվից էլ ուրախ լուրեր չէին ստացվում։ Սուրենը բանտում նրուած էր ծանր պայմաններում, ոչ ոք չկար նրա մասին հոգացող։ Երբ մենք տուն եկանք, Իլյիչն իսկույն ևթ նամակ գրեց Ոսկիին [Տեր-Հովհաննիսյան]՝ խնդրելով հոգ տանել երկու Սպանդարյանների մասին»[6]։

---

[6] Ն. Կ. Կրուպսկայա. Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին. Երևան, 1977, էջ 243։

Ոսկի Տեր-Հովհաննիսյանը հայ նշանավոր գրող Մուրացանի կինն էր, ապրում էր Գերմանիայում։ Նա «նոր դարի» թղթակիցն էր և հարազատորեն կապված էր Սպանդարյանների ընտանիքի հետ։ Ո. Տեր-Հովհաննիսյանը ակտիվորեն մասնակցում էր հասարակական իրադարձություններին և հակվեց դեպի սոցիալ-դեմոկրատական շարժումը։ Ս. Սպանդարյանը 1912 թ. հունվարի վերջին Բեռլինում Վ. Ի. Լենինին ծանոթացրեց Ո. Տեր-Հովհաննիսյանի հետ, որից Վլադիմիր Իլյիչը ստացավ լավագույն տպավորություն։

Վ. Ի. Լենինը Փարիզից Բեռլին Ո. Տեր-Հովհաննիսյանին նամակ ուղարկեց (մայիսի 5-ին)։ Այն հագեցված է մարդկային մեծ կարեկցանքով ու ջերմությամբ։ Վլադիմիր Իլյիչը գրում է. «Werte Genossin[7], չգիտեմ, հայտնի՞ է արդյոք Ձեզ մի տխուր լուր մեր ընդհանուր բարեկամի՝ Սուրեն Սպանդարյանի մասին, որն ինձ Ձեզ հետ ծանոթացրեց Բեռլինում։ Նա ձերբակալված է Բաքվում։ Նրա կինը գրում է հորը, որ նրա մասին հոգ տանող չկա, որ նա անկողին, ոչինչ չունի»[8]։ Բայց ծանր և նույնիսկ «հուսահատական» վիճակում էր նաև հայրը՝ այդ հիվանդ ծերունին, որին դուրս էին քշում բնակարանից՝ վարձը չտալու համար։ Տղան խոստացել էր փող ուղարկել, բայց ձերբակալման պատճառով չի կարողացել։ «Մենք,— շարունակում է Լենինը,— նրան օգնեցինք մի փոքր փոխտվությամբ։ Բայց և այնպես ես որոշեցի Ձեզ գրել։ Հավանաբար, Դուք գիտեք Սպանդարյանին ծանոթներ ու բարեկամներ Բաքվում և Փարիզում։ Արդյոք Դուք Բաքվում չգիտե՞ք որևէ մեկին, որին կարելի լինի գրել Սուրենի վերաբերյալ և խնդրել հոգ տանել նրա մասին։ Հետո, եթե Դուք ունեք ընդհանուր ծանոթներ, շատ կարևոր կլինի հոգ տանել նաև հոր մասին։ Ասում են, թե նա հարուստ որդի ունի Եկատերինոդարում։ Լավ կլինի, եթե Դուք նրան ես եռանդագին գրեիք, որ նա որքան կարելի է շատ փող ուղարկի հորը, որպեսզի նա կարողանա պարտքերը վճարել և մեկնել։ Հուսով եմ, Դուք կանեք, ինչ կարող եք երկու Սպանդարյանների համար. և այդ մասին մի երկու խոսք ինձ»[9]։

Կասկած չկա, որ Ո. Տեր-Հովհաննիսյանը, թեև ինքն էլ ապրում էր սուղ պայմաններում, կատարեց առավելագույնը իր հնարավորությունների սահմաններում։

Սպանդարյանի հայրը սփոփվեց Լենինի ու Կրուպսկայայի մարդկային վերաբերմունքից։ Այդ մասին նա ապրիլի 24-ին գրեց Թիֆլիս՝ իրենց մտերիմ Բ. Շահպարոնյանին և մասնավորապես նշեց, որ «մի երկու լավ ռուս (Սուրենի ծանոթներից) այս վերջին շաբաթները փոխառությամբ ինձ օգնեցին»[10]։

Ժամանակները փոխվեցին, հալածանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Բայց Սուրեն Սպանդարյանն այլևս չկար, նա մահացել էր 1916 թ. սեպտեմբերին Կրասնոյարսկում։ Նրա հայրը՝ Սպանդար Սպանդարյանը 1921 թ. Փարիզից նամակ է գրում Վ. Ի. Լենինին՝ աջակցել իրեն վերադառնալու հայրենիք։ Վլադիմիր Իլյիչը հուզմունքով է կարդում այդ նամակը։ Ներումնու խնդիրը կատարելու համար նա հունիսի 11-ին հատուկ գրությամբ դիմում է Ռկ(բ)կ Կենտկոմի քարտուղարությանը և մասնավորապես նշում, որ ինքը և կուսակցության կենտրոնի բոլոր աշխատողները Սուրեն Սպանդարյանին գիտեն վաղուց որպես «շատ արժեքավոր ու նշանավոր աշխատողի» և անպայման պետք է օգնել այդ «ականավոր հեղափոխականի հորը»[11]։ Հարցը լուծվում է դրականորեն և կազմակերպվում է ամեն կարգի աջակցություն, այդ թվում դրամական օգնություն (ուղարկվում է 200 ռուբլի՝ ոսկով)։ Դրա-բախտաբար, հիվանդության պատճառով Սպանդար Սպանդարյանը չի հասցնում անմիջապես մեկնել և մահանում է արտասահմանում (1922 թ.)։

Այս ամենը, կարծում ենք, ավելի պարզ են դարձնում հրատարակվող հոդվածի իմաստը։ Այն ոչ միայն հարազատի արդարամիտ հոգատարության դրսևորում է, այլև, ու գլխավորապես, քաղաքական փաստաթուղթ, Սուրեն Սպանդարյանի հավատամքի ու մարտնչող հեղափոխականության ցուցանիշ։

Պրոֆ. Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

---

7 Թանկագին ընկերուհի։

8 В. И. Ленин. Полное собрание сочинений. Т. 48, с. 62.

9 Նույն տեղում, էջ 63։

10 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4006, ց. 1, գ. 548, թ. 1։

11 В. И. Ленин. Полное собрание сочинений. Т. 52, с. 272.

ՈՒՄ ՈՐ ՁԵՎԸ ՈՒԶՈՒՄ Է ՊԱՏԺԵԼ՝ ՆԱԽ ԽԵԼՔՆ Է ԱՌՆՈՒՄ

Սպանդար Սպանդարյանի հայտնի գործը վերջացավ, բայց միայն յուր սկզբնական շրջանում։ Միջկուսակցական դատարանը միաձայն կայացրած իր դատավճռով հաստատեց, որ Ս. Սպանդարյանը որևէ ձևով ոչ մի մասնակցություն չի ունեցել քաղաքական լրտեսության գործում։ Որ դատարանը այդպիսի վճիռ պիտի տար, դրա մասին ոչ ոք էլ չէր կասկածում, որովհետև ամեն մի ոչ կույր մարդու համար էլ պարզ էր և ակներև այս ծանր մեղադրանքի անհեթեթությունը, որ բարդում էին Սպ. Սպանդարյանի վրա։ Ով ծանոթ է «Նոր դարի» խմբագրի թե՛ հասարակական-քաղաքական ֆիզիոնոմիային և թե՛ իբրև մարդու, այդ գարշելի անհեթեթության հենց առաջին երևան գալու րոպեին հասկացավ, որ այդ մեղադրությունը—կամ մի սարսափելի սխալ է և կամ թե նախամտածված հրեշային սուտ է՝ թելադրված կուսակցական գծուծ շահերից։

Մեզ իսկապես չի հետաքրքրում դատարանի վճիռը, որովհետև Սպանդարյանին ձևական կերպով անմեղ ճանաչելու մեջ մենք չէինք կասկածում։ Ավելի շատ կարևոր է հասարակական տեսակետից մեղադրողների այն այլանդակ պատկերը, որ երևան եկավ այդ դատավարության միջոցին։

1910 թ. օգոստոսին «Դաշնակցության» կուսակցության օրգան «Դրոշակում» լույս տեսավ մի պաշտոնական հայտարարություն Սպ. Սպանդարյանի՝ Ոստիկան. Դեպարտամենտում ծառայության մասին, ընդսմին հայտնելով, թե այդ սոսկալի մեղադրությունը հիմնված է «անժխտելի փաստերի ու փաստաթղթերի վրա», որ «արդարանալու ամեն մի փորձ զուր է», որ «կուսակցության Նեմեզիդան կպատժի դավաճանին և պրովոկատորին»։

1911 թ. հունվարին Փարիզում, Բուրցևի բնակարանում, Սպանդարյանի և մեղադրողների հենց առաջին իսկ տեսակցության միջոցին պարզվում է, որ «անժխտելի փաստերն ու փաստագրերը»— այդ նախկին պահնորդական Լ. Մենշիկովի բերանացի տված հայտարարությունն է եղել, որը հենց այդտեղ էլ, Սպ. Սպանդարյանին տեսնելով իր դիմաց կանգնած, հրաժարվում է իր մեղադրությունից, հայտնելով որ նա՝ Սպ. Սպանդարյանը, այն մարդը չէ, որին ինքը տեսել է 1904 թ. հունվար ամսում Ոստիկ. Դեպարտամենտում, և որ նա, որին ինքը համարում էր «Նոր դարի» խմբագիր-հրատարակիչ, վերջինիս հետ ընդհանուր ոչինչ չունի և որ ցավալի թյուրիմացություն է առաջացել։

Դրանից հետո պետք է միջկուսակցական ձևական դատարան կայանար, որը հրավիրելու նախաձեռնողը պիտի լիներ «Դաշնակցություն» կուսակցությունը։ Այդ դատարանում մեղադրողները պետք է իրենց վարմունքի մասին բացատրություն տային, ապացուցեին, որ թյուրիմացությամբ իրենց գործածը «բարեխղճությամբ է եղել»։

Չորս ամիս (հունվար, փետրվար, մարտ, ապրիլ) դաշնակցականների կուսակցությունը ձգձգում է իր խնդիրը՝ դատարան հրավիրելու մասին։ Դատարանի առաջ երկու կողմից էլ Սպ. Սպանդարյանը և «Դաշնակցության» ներկայացուցիչը պարտավորվել էին՝ լուռ մնալ և մինչև դատավարության վերջանալը ոչինչ չհաղորդել մամուլին։

Սպ. Սպանդարյանը իր տված խոսքը ճշտությամբ կատարեց, այնինչ ռուսական մամուլում՝ դեռևս դատավարության ընթացքում հաղորդվել էին սխալ տեղեկություններ Սպ. Սպանդարյանի արդարանալու վերաբերմամբ ինչ-որ դատարանով, որը կայացել է իբրև թե «Դաշնակցության» և այլ կուսակցությունների ներկայացուցիչներից, և առհասարակ որոշ հոգով ու մտքով դիտավորյալ տեղեկություններ էին հրատարակում։

Բայց դրանք դեռ աննշան բաներ էին, որոնք միայն կիսով չափ էին պատկերացնում «հեղափոխական» Դաշնակցության ղեկավարների պատկերը։ Երբ տեսան, որ ոչ մի կերպ չէր կարելի իրեն՝ Սպ. Սպանդարյանին մեղադրել, իրենց հեղինակությունը՝ պրեստիժը բարձրացնելու համար այդ պարոնները կանգ չառան մի նոր անազնվության առաջ— այդ «գործի» մեջ խառնել Սպան-

դար Սպանդարյանի ընտանիքը։ Ապացույցներ եք ուզում։ Սակայն ի՞նչ հարկավոր են դրանք, քանի որ իրանք մեղադրողները «անձեռնմխելիությամբ» են պաշտպանված, ուստի և գործում են անեկյուղ...։

Վերջապես դատարանը դուրս բերավ իր դատավճիռը։

«Դաշնակցության» կուսակցության օրգան «Դրոշակը», պարտավորվելով տպագրել իր մերձավոր համարում այդ վճիռը, չի տպում։ Ի՞նչու համար։

Ահա հենց այստեղ է, որ պետք է սկսվի այդ հայտնի գործի երկրորդ շրջանը,—Սպ. Սպանդարյանի դատը «Դաշնակցությունն» կուսակցության դեմ։

Ամեն մի քաղաքակիրթ հասարակություն պետք է իր անողոք դատավճիռը տա մի այդպիսի կուսակցության վերաբերությամբ, որը իդեալականության դիմակի տակ՝ իսկապես բարբարոսաբար ցեխոտում և անմաքուր միջոցներով ոտնատակ է տալիս մարդու և քաղաքացու անբռնաբարելի իրավունքը, որն ամենացայտուն կերպով իր նեղ՝ կատարյալ գաղանային բնաղդներին բավականություն տալու համար, ծաղրում է ճշմարտությունն ու արդարությունը։

S.

НОВОВЫЯВЛЕННАЯ СТАТЬЯ С. СПАНДАРЯНА

Проф. М. В. АРЗУМАНЯН

(Резюме)

Выдающийся деятель Коммунистической партии Сурен Спандарян оставил богатое литературное наследие. В годы Советской власти была проделана большая работа по сбору и изданию сочинений С. Спандаряна. Но можно сказать, что не все его статьи найдены и вошли в сборники его сочинений. При подготовке монографии о Сурене Спандаряне в связи с его 100-летним юбилеем мною в армянской газете «Нор дар» («Новый век») от 24 октября 1911 г. была обнаружена статья «Кого Зевс хочет наказать, у того прежде отнимает разум». Она подписана латинской буквой S., т. е. одним из псевдонимов Сурена Спандаряна Кроме того, язвительное заглавие, язык и стиль, содержание статьи неопровержимо свидетельствуют о ее принадлежности Сурену Спандаряну.

В этой статье С. Спандарян разоблачает клевету дашнаков в адрес редактора газеты «Нор дар»—его отца Спандара Спандаряна, представленного ими в качестве «царского агента». Межпартийный суд опроверг злостное обвинение дашнаков и полностью оправдал Спандара Спандаряна; на скамье подсудимых оказались сами дашнаки. Сурен Спандарян считал, что судебным процессом завершился только первый акт данного «шумного дела» и нужно продолжать решительную борьбу против партии Дашнакцутюн.